Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամը **«Աշխարհացույց» կրթական ծրագրի շրջանակում** հայտարարում է հանրակրթական դպրոցներին ժամանակակից տեխնիկայով վինելու՝ **«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026»** մրցութային ծրագրի մեկնարկը:

Ծրագրի նպատակն է Հայաստանի պետական հանրակրթական դպրոցներին վինել նոր սերնդի կրթական սմարթ-էկրաններով՝ որպես ժամանակակից կրթական միջավայր ձևավորող թվային ենթակառուցվածքի առանցքային բաղադրիչ: Մրցութային ծրագիրը, «Վիզուալ Հայաստան» զարգացման հիմնադրամի այլ հեղինակային ծրագրերի նման, մշակվել և առաջնահերթություն է ստացել կարիքների գնահատմատման արդյունքում:

Հայաստանի հանրակրթական դպրոցներում ժամանակից կրթական միջավայր ստեղծելուն միտված **«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026»** (ՍԷԱԴ 2026) մրցույթ-ծրագիրը հնարավոր է դարձել իրականացնել Հիմնադրամի ռազմավարական գործընկեր «Մանուկյան Սիմոն» հիմնադրամի շարունակական աջակցության շնորհիվ:

Վիզուալ Հայաստան զարգացման հիմնադրամ

Մանուկեան Սիմոն հիմնադրամ

Ստորև խնդրում ենք **ուշադիր կարդալ և ծանոթանալ** Ծրագրի բովանդակությանը, պահանջներին և պայմաններին:

Ո՞վ կարող է դիմել Ծրագրին

ՍԷԱԴ 2026 մրցույթ-ծրագրին կարող են դիմել «Աշխարհացույց» կրթական համայնքի՝ շահույթ չհետապնդող այն բոլոր հանրակրթական դպրոցներն ու քոլեջները, որոնք բավարարում են հետևյալ չափանիշներին.

- ունեն «Աշխարհացույց» հարթակի կիրառման առնվազն 6 ամսվա փորձառություն,
- դպրոցի ուսուցիչները մասնակցել կամ մասնակցում են Հիմնադրամի վերապատրաստումներին,
- դպրոցի անձնակազմը քաջատեղյակ է մրցույթ-ծրագրի պայմաններին և պատրաստակամ է դրանք կյանքի կոչել,
- սովորողները գրանցված են brainograph.com հարթակում,
- դպրոցն այս պահին կամ առաջիկա մեկ տարին չի հիմնանորոգվելու,
  դպրոցի տնօրինությունը պատրաստակամ է Հիմնադրամի հետ կնքել համագործակցության պայմանագիր, որով ստանձնում է պատասխանատվություն ծրագրի բոլոր փուլերի լիարժեք իրականացման, ռեսուրսների նպատակային օգտագործման և սահմանված ժամկետներում հաշվետվողականության ապահովման համար,
- դպրոցը կարևորում և խրախուսում է մասնագետների շարունակական մասնակցությունը Հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին՝ միաժամանակ նպաստելով «Աշխարհացույց» կրթական հարթակի հնարավորությունների ինտեգրմանը դասապրոցեսում՝ որպես սովորողների ներգրավվածության բարձրացման արդյունավետ գործիք,
- Հիմնադրամի վերապատրաստումներից ունեցած հավաստագրերը կդիտարկվեն որպես առավելություն:

Մրցույթի թեման է՝ **«Քարտեզագրելով Հայաստանի բնության ապագան. գլոբալ խնդիրներ, տեղային լուծումներ»**: Մրցույթը կընթանա **երկու փուլով**: Նախագծային մրցույթ-ծրագրի ամբողջական հայեցակարգին ծանոթացեք հետևյալ հղումով: Ստորև ներկայացված են յուրաքանչյուր փուլի համար սահմանված պահանջները:

I փուլ

Առաջին փուլի համար սահմանված են հետևյալ պահանջները

- բեռնե՛լ և լրացնե՛լ հետևյալ ձևաթուղթը,
- լիարժեք լրացնել հետևյալ հայտը:

Ուշադրություն. չեն դիտարկվի այն դիմումները, որոնք չեն բավարարի առաջին փուլի պահանջները:

Դիմելու վերջնաժամկետը **ս.թ. ապրիլի 30-ն է**: Դիմումի ամբողջական փաթեթն անհրաժեշտ է ուղարկել smartschools@visualarmenia.org էլհասցեին՝ «Թեմա» բաժնում գրելով Ծրագրի անվանումը՝ **«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026»:**

Երկրորդ փուլ անցած դպրոցներն այդ մասին կտեղեկացվեն ս.թ. մայիսի 10-ին էլհասցեի միջոցով, որից հետո կմեկնարկի 2-րդ՝ բուն նախագծի իրականացման և վերապատրաստումների փուլը:

II փուլ

Երկրորդ փուլը կմեկնարկի ս.թ. մայիսի 15-ին և կավարտվի հոկտեմբերի 10-ին՝ նախագծային աշխատանքների հանձնմամբ: Ծրագրի երկրորդ փուլ անցած դպրոցները կներգրավվեն առնվազն 6 թեմատիկ վերապատրաստումներում (նախագծային աշխատանքի հմտություններ, 21-րդ դարի հմտություններ, ՏՀՏ հմտություններ և այլն), որոնց նպատակն է ներգրավված դպրոցներին ուղղորդել և աջակցել լավագույն նախագծային աշխատանք կատարելու ճանապարհին:

«Քարտեզագրելով Հայաստանի բնության ապագան. գլոբալ խնդիրներ, տեղային լուծումներ» խորագրով իրականացված նախագծային աշխատանքները կդիտարկվեն և կգնահատվեն մրցութային հանձնաժողովի կողմից հետևյալ սանդղակի հիման վրա: Մասնակիցներից պահանջվելու է նախագծային աշխատանքի **վերջնարդյունքը ներկայացնել** brainograph.com **հարթակում՝** հղումն ուղարկելով Հիմնադրամին:

Լավագույն 80 աշխատանքներ ներկայացրած դպրոցները կվաստակեն նոր սերնդի սմարթ-էկրան: Պարտադիր պայմանները բավարարած և հավասար միավորներ հավաքած դպրոցների ընտրության համար սահմանված հավելյալ չափանիշներն են.

- դպրոցում «Աշխարհացույց» կրթական ծրագրի շահառու սովորողների քանակ,
- դպրոցում «Աշխարհացույց» կրթական ծրագրին ներգրավված ուսուցիչների քանակ,
- դպրոցում նորարարական ուսումնական տեխնիկայի կարիք,
- դպրոցի՝ համայնքում մենթոր լինելու կամ դառնալու հանգամանք:

Ի գիտություն

- Երկրորդ փուլ անցած դպրոցների հետ կիրականացվի մենթորական աշխատանք՝ ըստ Ծրագրի սահմանած ժամանակացույցի և ուղեցույցի:
- Նախագծային աշխատանքների գնահատումը կատարելու է տարբեր կրթական կառույցների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ «ԱՇԽԱՐՀԱՑՈՒՅՑ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ներածություն. խնդրի սահմանում

XXI դարի որակյալ ու հասանելի կրթությունը, դասավանդման մեթոդամանկավարժական բարձր պահանջներից բացի, ենթադրում է կրթական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում և տիրապետում:

Կրթական նորարարությունների և դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառումը հանրակրթության ոլորտում դարձել է շատ ավելի պահանջված: «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ներդրման վերջին չորս տարիների ընթացքում հանդիպել ենք հանրակրթական դպրոցներում առկա հետևյալ խնդիրներին.

- ուսումնական գործընթացն արդիական կազմակերպելու համար անհրաժեշտ տեխնիկայի պակաս, հաճախ նաև՝ բացակայություն,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման հմտությունների պակաս,
- ինտերակտիվ բովանդակության բացակայություն:

Խնդրի լուծում. դպրոցների տեխնիկական վերակինում՝ որպես կարգացման անհրաժեշտ նախապայման

«Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչման ու գործածման վերապատրաստումների ընթացքում ուսուցչական համայնքի ներկայացուցիչները բազմիցս բարձրացրել են խնդրո առարկան՝ դպրոցը չունի տեխնիկական միջոց ինտերակտիվ և ներգրավող դաս կազմակերպելու համար: Խնդիրը վեր է հանվել ու **Հիմնադրամի համար դարձել առաջնահերթություն:**

«Վիկուալ Հայաստան» կարգացման հիմնադրամը **«Աշխարհացույց» կրթական ծրագրի** շրջանակում մրցութային կարգով հնարավորություն է ընձեռում ՀՀ պետական հանրակրթական դպրոցներին լրացնել իրենց տեխնիկական հագեցվածության բացը՝ մասնակցելով հայտարարվող ծրագրին՝ ըստ սահմանված պահանջների:

Հաջողված օրինակներ. «Աշխարհացույց» ծրագրի փորձարարական փուլի ընթացքում հանրակրթական երկու դպրոց ստացել է սմարթ-էկրան, որի հիման վրա կառուցվել է **«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին»** մրցութային ծրագիրը: Արդյունքում 2023-2025 թթ. ՀՀ 322 դպրոցների, որպես մրցույթի պարգև, տրամադրվել է նորագույն տեխնիկա, ինչի շնորհիվ «դասասենյակները դարձել են դպրոցի նորարարական կենտրոններ», սմարթ-էկրանը՝ «պատուհան դեպի աշխարհ», դասերը՝ «անչափ հետաքրքիր ու սպասված»:

Ծրագրի շրջանակում սմարթ-էկրան ստացած դպրոցը պարտավորվում է.

- տեխնիկան օգտագործել բացառապես դպրոցի կրթական նպատակների համար՝ ապահովելով դրա տեխնիկական սարքինությունը,
- իրականացնել նախագծային աշխատանքներ,
- իրականացնել նախագծային աշխատանք առնվազն մեկ այլ դպրոցի հետ,
- կիսվել «Աշխարհացույց» կրթական ծրագրի և տեխնիկայի ընձեռած հնարավորություններով համայնքի այլ դպրոցների հետ՝ կազմակերպելով ճանաչողական ու կիրառական հանդիպումներ:

Ուշադրություն: Հիմնադրամը հաղթող դպրոցի հետ կնքելու է Տեխնիկայի նվիրատվության պայմանագիր և Գործընկերության հուշագիր, որտեղ սահմանված են կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Նպատակ և արդյունք

«Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրի շրջանակում **պետական հանրակրթական դպրոցներին** տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակն է՝ նպաստել կրթության որակի և արդյունավետության բարձրացմանը, որի արդյունքում առաջին հերթին կձևավորվի «Աշխարհացույց» կրթական հարթակից օգտվելու (կայքը՝ https://brainograph.com/) և դրա օգնությամբ ինտերակտիվ դասեր կազմակերպելու հմտություններ ունեցող, մեթոդամանկավարժական նոր կարողություններ զարգացնող ուսուցչական համայնք, ապա նաև «Աշխարհացույցում» դեռևս չներառված առարկաների դասերի ու տարատեսակ միջոցառումների արդյունավետ և հիշարժան կազմակերպում, քանի որ նորագույն սմարթ-էկրանները բազմաֆունկցիոնալ են և կիրառելի տարբեր առարկաների համար:

Տեխնիկական նման հագեցվածություն ունեցող դպրոցները, որտեղ առկա են նաև վերապատրաստված և վերապատրաստվող մանկավարժներ ու կրթության կազմակերպիչներ, կարող են լիարժեքորեն ստանձնել մրցունակ սերունդ կրթելու առաքելությունը՝ քայլելով ժամանակի պահանջներին համընթաց: Ակնկալվում է, որ Ծրագիրը կնպաստի «Աշխարհացույց» կրթական նորարարական հարթակի ճանաչմանն ու գործածմանը, արդյունավետության բարձրացմանը, որի ընթացքում և արդյունքում դպրոցն իր ուսուցչի և սովորողի հետ.

- կդառնա «Աշխարհացույց» ծրագրի մասնակիցն ու տարածողը,
- կառաջնորդի գործընկեր դպրոցներին դեպի XXI դարին համահունչ կրթական միջավայրի ձևավորում և դասավանդում,
- կդառնա ինքնաճանաչ և կձևավորի լայն աշխարհայացքով, գործընկերության պատրաստ ու առաջնորդություն ստանձնող համայնք:

Ծրագրի միջանկյալ արդյունքները

Երեք տարվա՝ 2023-2025 թթ. ընթացքում

- ծրագրին դիմել է 502 դպրոց,
- իրականացվել է 437 նախագծային աշխատանք,
- ՀՀ բոլոր մարզերից հաղթող է ճանաչվել 320 դպրոց, որտեղ տեղադրվել է նորագույն ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային էկրան,
- հաղթող նախագծային աշխատանքներին մասնակցել են 596 ուսուցիչ և 3342 սովորող,
- մոտ 120,000+ սովորող այս ծրագրի շահառու է՝ որպես սմարթ-էկրան ստացած դպրոցի սովորող:

Ազդեցություն 2023–2025

322 հանրակրթական դպրոց

90 000+ աշակերտ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սմարթ-էկրաններ Աշխարհացույցի դպրոցներին 2026» ծրագրի արդյունավետ իրականացումն ու ընդլայնումը մեծապես կնպաստի մրցունակ դպրոցների և կրթական միջավայրի ձևավորմանը՝ առնվազն այս ծրագրի շրջանակում ապահովելով միջավայրի կայուն զարգացում: